ԱԶԱՏ
ԱՆԵՐԿԻՒՂ
ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ
ԲԱՐԵԿԱՄ ԱՆԿԵՂԾ
ԱՆԱՐԴԱՐԻՆ ՈՒԽԵՐԻՄ

Արդարութիւն

Circulation larger than any other Armen. paper in the U. S.

Գ. ՏԱՐԻ, ԹԻՒ 48 — ՅՈՒԼԻՍ 1, 1891 — ԳԻՆ ՏԱՍԸ ՍԷՆԹ

ԱԶԳԱՅԻՆ
ՆԱՀԱՏԱԿ

«Մենք այս տեղ ահա կը դնենք բառ առ բառ ինչ որ ինք Գուլգաբզեան մեզ պատմեց. գիտնալով թէ էհրատարակութեան պիտի ղրկուին իւր ասածներ.

«Այս կարապետ Գուլգաբզեան, Վարդան Յարութիւնեան Գոլշենց և Յովհաննէս Ագրիպպասեան, Սալմաստում մեր գործերը վերջացնելուց յետոյ, մայիսի 15 ի գիշերը քըրդական հագուստներն հագած դուրս եկանք դէպի Տաճկահայաստան գնալու։ Մենք ունէինք մեզ հետ իւրաքանչիւրս մի մի հրացան. իմս ու Պ. Վարդանինը Ռուսական Բէրդանգ էր, իսկ Արգիպպասեանինը Հէնրի Մարթինի։ Այդ հրացանների պատճառով մենք ստիպուած էինք գիշերները գնալ. իսկ ցորեկները քաշուում էինք քարերի տակ և քնում, մինչև անցանք բաւական Տաճկաց հողը, այսինքն Աղբակը։ Այդտեղ մեր հրացանները պահելով, սկսեցինք մեն գալ գիւղերը։ Մեր նպատակն էր թէ՝ գիւղացւոց վիճակն մօտէն տեսնել և անոնց պէտքեր ուսումնասիրել և թէ մեզ ընկերներ ճարել։ Մենք ուրախութեամբ տեսնում էինք որ ամէն տեղ նոյն իսկ ամենառամիկ հայ գիւղացի երիտասարդներն, թուրք կառավարութեան հարստահարութիւններէն նեղուած, յուսահատած, պատրաստ էին մեզ հետ միանալու. ինչպէս երևեցաւ, գործը արդէն բաւական առաջ է գնացել հեղհեղեալ և այդ բանի մէջ մեծապէս օգնում է ինքը թուրք կառավարութիւնը, անդադար հարստահարելով հայ ժողովրդին։ Բայց գիւղացիները մեզնից պահանջում էին միայն... Այս կէտերը «Հայոց Հայրենասիրական Միութեան» խորին ուշադրութեանը պէտք է յանձնարարել. ժամանակ է օգուտ քաղել այդ վերին ասպետանի հարստահարուած ժողովրդի յուսահատական դրութիւնից...։ Վերջապէս Աղբակից մենք երեքս համբայ ինկանք դէպի Վան. բայց դժբաղդութիւնը կարծես մեզ հետևում էր. մայիս 23 երեքշաբթի ցերեկը մենք գնում էինք լեռնային ճանապարհով որ երեկոյեան մեզ պիտի հանէր Զուխ կէտուքի Կանի Սալի կոչուած տեղը, որ տեղից ճանապարհները կը շարունակէինք դէպի Վան։ Այդտեղ մենք հասանք ալաթուրքա ժամը տասին և աղբիւրին մօտ մի քիչ հաց ուտելուց յետոյ երբ ճանապարհ ընկանք, տեսանք յանկարծ ճանապարհին մօտ գտնուած ձորին մէջ տասը հատ ձիաւոր զապթիաներ որոնք, ինչպէս տեղեկութիւն ըստացայ, Պաշգալէէն գնում էին Վան և իրենց հետ էլ գտնվում Պաշգալէի հեռագրատան Միւտիրի ընտանիքը։ Զապթիաները մեզ տեսան թէ չէ կանգնեցին. իսկ մենք մեր ճանապարհը շարունակեցինք ձորի մէջով, նոքա մօտ մեզնից հարիւր քայլ հեռու էին. և որովհետև մենք արդէն լատերատած էինք ճանապարհի գիրքերը և քարերն անգամ, շտապեցինք բարձրանալ դէպի լեռը. մեր գնացած տեղով ձի անցնել չէր կարող, դորա համար նոքա հակառակ կողմից քշեցին ձիերը մեր յետեից. մենք սկսեցինք վազել մինչև մի յարմար գիրք գտնել։ Արդէն մեր վիճակը որոշուած էր, կամ պէտք էր անձնատուր լինել կամ կռուել մեզնից երեք անգամ աւելի ուժի դէմ. ի հարկէ մենք պատրաստ էինք մեռնելքան թէ ընկնել մեր թշնամւոյն ձեռք և բանտարկուած մնալ մինչև մեր կեանքին վերջ. մենք կարողացանք միմեանցից դրեթէ երեք հարիւր քայլ հեռու մի մի քար գտնել և նրանց յետև պատսպարուեցանք կռուելու համար։ Թուրք ձիաւորները սկզբում էին յառաջ գալ և ունենում են տասնապատ. կուրը սկսվում է. բոլորն օրհասական է. իւրաքանչիւր մի գնդակին պատասխանում էր երեքը թշնամու կողմից և մենք սիպուած էինք կարելի եղածին չափ խնայողութեամբ գործածել մեր ունեցած գնդակները. բայց մեր բռնած դիրքը բաւական պաշտպանում էր մեզ։ Ամենից առաջ մեր սուլիծասիրա Վանեցի Յովհաննէս Արգիպպասեանը՝ որի քաջութիւնները արդէն ծանօթ էին, Մարթինի հրացանը ուղղում է թուրք դիւնուորների տասնապետին. բայց գնդակը դեռ չում է նորա ձիու ճակատին որ խրոյն վար է ընկնում. այնուհետև Վարդանն ևս սկսում է հրացանձգութիւնը և երկու կողմերից էլ, մանաւանդ թշնամու կողմից, գնդակները թափվում էին կարկտի պէս։ Յովհաննէսի գընդակներից մէկը սպանում է արդէն թուրք զինուորներից մէկին։ Մութն սկսեց ընկնել բոլորովին և արդէն միմեանց չէինք տեսնում բայց կռիւը շարունակվում է դեռ ևս։

«Վարդանի կողմից հրացանձգութիւնը դադարվեց գընտակներն սպառուած լինելով. այդ միջոցին մի թուրք զինուոր մօտենում է Վարդանին. Վարդանը որ կողքին ունէր ևս մի խանջալ, յանկարծ խանջալը քաշում է զինուորին վրայ և մի քանի հարուած տալով տեղնուտեղը սպանում է նրան, այնուհետև խանջալով ինք իրան զարկում է և մեռածի նման ընկնում է իր արեան մէջ շաղախուած։ Թուրք զինուորները սկսեցին սկսեցին վազել դէպի Վարդանի տեղը. այդ ժամանակ ես յարմար միջոց գտնելով, տեղս փոխեցի այնպէս որ այդ խառնակութեան և մթան մէջ նոքա չիմացան իմ տեղափոխուելը։ Մի փոքր յետոյ լսեցի որ զապթիաները հայհոյելով գնում էին յետ. եկան իմ տեղս նայեցին և ինձ փնտռեցին բայց չգտան. ես նոցա գլխի վերան էի։ Երբ բոլորովին հեռացան և այլևս ձիերի ոտքի ձայն չէր լսվում, ինձ տակ քարիս ընկերներիս գտնելու. մի քիչ գնայի և լսեցի մի տգոցի ձայն. մօտեցայ. զարհուրելով տեսայ իմ թանկագին և ազնիւ ընկերս Վարդանը, մերկ, միակ մի վարտիքով, արեան մէջ ընկած լողում է. մօտեցայ, դեռ կենդանի էր. Թիւրքերը նրան մեռած կարծելով դիակը կողոպտել և հեռացել էին. նայեցի վերքին, տեսայ շատ խոր էր և հարյնելով իմացայ որ ինքն իրեն է զարկել խանջալով. յայտնեց իր վերջին կամքը, տուաւ ինձ մի քանի յանձնարարութիւններ և ծնկերիս վրա աւանդեց իր վերջին շունչը, գոչելով «վրէ՛ժ...»։ Այնուհետև փնտռեցի Ագրիպպասեանին և գըտայ նրան արդէն մեռած, ստանալով իր կրծքի վերայ գնտակների երկու մահացու հարուածներ...։ Նրան էլ նոյնպէս կողոպտել էին Թիւրք զօրքերը։ Այդ տեղ շատ դառն եղաւ իմ վիճակս. ժամերով ընկայ երկու անչնչացած ընկերներիս վերայ. չէի ուզում բաժնուիլ նորանից։ Այս վիճակի մէջ մնայի մինչև կէս գիշեր. յանկարծ միտքս ընկաւ Վարդանի իմ անգին ընկերոջ յանձնարարութիւնը. վերջ կայայ մի վերջին հայեացք ևս ձգելով այդ առաջին նահատակների սուրբ մարմինների վերայ։ Անկարելի էր լինում ինձ բաժնուիլ նոցանից... բայց Վարդանը կար ես թէ կենդանանում էր և թէս բռնելով ասում էր. «Վերջին կամքս պէտք է կատարես...»։ Ով ունեցել է ընկեր, ով սիրել է ընկերոջ, նա կարող է հասկանալ, ինչ ասել է մահուան բոյէին ընկերոջ կամքը, այն էլ այս վիճակում...։ Վերջապէս գլուխս կախած ընկայ ճանապարհ դէպի Սալմաստ։ Ճանապարհին վրայ մտայ մի գիւղ ուր ունէի բարեկամ. նրան պատմեցի անցքը, նա չուզեց որ միայնակ ճանապարհորդեմ և իր Քուրդ ծառայն ինձ ընկեր տուաւ վախուստի վտանգաւոր տեղերէն անցնելու համար։ Մօտենալով Սմոյի կոչուած գիւղին, մեզ պատահեցին երկու ձիաւոր Քուրտեր որոնք ուզեցին մեզ կողոպտել. բէվոլվէրս քաշեցի նրանց խրտնելու համար, բայց իմ ընկեր Դիւրդը միջամտեց և երկու կողմն էլ հանդարտեցուց։ Վերջապէս յաջողեցայ երեք օրից յետոյ ողջ առողջ եկնել Թրքական սահմաններից դուրս, թէև այդ կողմերքում ամէն տեղ հեռագրել էին կամ ինձ բռնել կամ սպանել։» Ճ.

ԹՈՒՐՔ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ԳՈՎԱՍԱՆՔԸ

Նահատակ Յովհաննէսի եւ Վարդանի մասին.

Դավրէժ 1889 Օգոստ. 23։

Այս օրերս Պաշգալէէն Դավրէժ եկող պանդուխտ Վանցի Հայեր պատմում էին հետևեալները որ Զուխտ կիրճում վիրաւորուած երկու Թուրք զինուորներն պատմել էին Պաշգալէի մէջ։ Զինուորների մէկի աջ ձեռքի մատերը բոլորովին չկան գնտակի հարուածներից, իսկ երկրորդին էլ ազդրը բոլորովին վնասուած է սրի հարուածից. սրանք այդ անցքից յետոյ վերադարձել են Պաշգալէ բժշկուելու։ Չնայելով վիրաբուժական օգնութիւններին որով բժշկուել են, զինուորութիւն չեն կարող անել յետ այսու, որովհետև մէկը մատներ չունի, իսկ միւսն էլ կաղում է։ Բանը այժմ այն է որ այդ զինուորները Պաշգալէի մէջ ամէն հարցանողի պատմում են որ իրենք այդպիսի քաջ եռանդոտ Հայեր չէին տեսել. շատ գովում են և ասում են որ հէնց նրանց սպաննեցին այն բանի համար որ նրանք երեք հոգի էին։ Այն նահատակուած երկու քարերի համար պատմում են որ չնայելով թէ չունէին մի այնպիսի ռազմական դիրք, այսու ամենայնիւ քաջութեամբ և գոռոզութեամբ սկսեցին մեր վրայ հրացանձգութիւն որ մենք զարմացինք թէ ինչպէս են համարձակվում երկու հոգի հայեր տասը ձիաւոր զինուորի դէմ կանգնիլ դէմ յանդիման և պատերազմիլ. որով աւելի կատաղած որոշեցինք որ անմիջապէս պէտք է սպանենք դորանց և յաջողեցանք։ Դեռ նրանք չսպաննուած, դիտում էինք հրացանձգութեան ժամանակ որ երկուքն ալ մռնչալով աշխատում էին հրացանների գընտակները իրանց նպատակին հասցընելու և յաջողեցնում էին. այդ ժամանակ օրը տարաժամելու վրայ էր։ Նոյնպէս պատմում էին չամաչելով որ երբ գնտակի հարուածներից վեր ընկան երկուքն ալ, դեռ Վարդանը չէր մեռած, զինուորներից մէկը մօտեցաւ կողոպտելու Վարդանին. յանկարծ Վարդանը որ կրում էր սուր իւր կողքին, մխեց մօտեցող զինուորի ազդրին և վիրաւորեց. հենց միև նոյն զինուորի ընկերն էր դա որին ազդրը վիրաւորուած էր, ևն։ Այսպէս ամէն հարցանողներին պատմում էին նրանց այդ քաջամարտութեան մասին։ Պատմում էին որ բացի իրենցից երկու հոգի էլ ըսպանուեցան միևնոյն ձորի մէջ։ Ասել են որ երկու մեռեալ և երկու վիրաւոր ունեցան Թուրքեր։

Նոյն Հայեր պատմում էին նաև որ այդ սպանուածների մարմինը մնացել է մի քանի օրեր բաց օդում։ Վանի անօրէն Խալիլ փաշէն թոյլ չէր տալիս թաղելու, ասելով որ պէտք է շուներ գան ուտեն նրանց մարմինները. ուստի զանազան մարդկանց խնդրանքը գնացին տարան թաղե ին մերձակայ մի հայ գիւղում։ Դեռ չթաղուած, փաշէն հրամայել է որ իւր լրտեսութեամբ յայտնի ոստիկան Աւետիս Պարթևեանը իր հետ տանելու Պրն. Գարեգին Բաղէշեանին որ օրերս բանտէն արձակուեցաւ, երկուսը միասին գնան և տեսնեն թէ սպաննուողները ո՞վքեր են. բայց չէին կարողանալ ճանաչել, բոլորովին դէմքերը փոխուած լինելու. պատճառով։ Պատմում էին որ դորանց մահը մեծ ցաւ պատճառեց։ Վանայ հարուստները ստորագրութեամբ դիմեցին Սուլթանին որ ի զուր տեղ սպաննել են երկու ճանապարհորդների և փաշէն զուրկ դրպարտութիւններ է անում Հայերին, ինք պատուանշան ստանալու համար։ Փաշէն լսում է այդ բանը և ձերբակալել տալիս է գլխաւոր հարուստներին։ Հայերն էլ պահանջել են քննութիւն. իսկ փաշէն գրել է Պաշգալէի միութասարրիին որ ստորագրութիւններ հաւաքէ իբր թէ այն սպանողները ապստամբներ են եղել. միևնոյն ժամանակ մի ուրիշ Թուրք գլխաւոր էլ որ փաշէն հակառակորդ է, ուրիշ ստորագրութիւն կը հաւաքէ ասելով որ դորանց տեսել են հանդարտ ճանապարհորդելիս և թէ ապստամբողներ չէին։ Լսէք թէ ինչեր են կատարվում մի այնպիսի տէրութեան մէջ որ իրաւունք և արդարութիւն ասած բաները չէ ուզում ճանաչել։ ՅԱՆԻԿ

Արմէնիա

ԱՍՈՐՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԿԸ ԾԵԾՈՒԻ

Տիգրանակերտէն կը գրեն մի այլ բարբարոսական եղելութիւն։ Տեղւոյն Ասորոց ալեւոր կաթուղիկոսն, իբր մէկ ամիս առաջ, օր մը առաջնորդարանն նստած ատեն տասնմէկ լակոտներ քարկոծել կսկսին առաջնորդարանն՝ քանի մը պատուհաններու ապակիներն կոտրելով։ Կաթողիկոսն անմիջապէս դուրս նայելով կը տեսնէ չարաճճի տղաքներն, ու իւր փաբրաւորն կը ղրկէ որ վանէ վանէ զանոնք։ Այս վերջինս փողոց ելնելով կը կատարէ իւր մեծաւորի հրամանն յանցաւորներու մի քանիին զարնելով թերևս։ Տասնմէկ տղաք լալով տուն կերթան. ասոր վրայ քանի մը տասնմէկ կնիկներ փառելու համար մասնաւորապէս ծախու տուած փայտերով Կաթողիկոսին կուգան և Նորին Վեհափառութիւնն քաշելով դուրս կը հանեն իւր խուցէն և տղէկ մը ծեծելէ վերջ կը մեկնին։

--Քէրքուքի տասնմէկներն, կրսէ լ Արմէնի, այդ կողմերու քիւրդերու դէմ բողոքող հանրագրութիւն մը պատրաստելով բաւական ատեն առաջ կը յղեն իրենց Սուլթանին՝ անոր գթութիւնն խնդրելով. բայց արդիւնք մը չեն տեսներ ընաւ, ուստի ստիպեալ վերջէն մի ուրիշ նմանօրինակ հանրագրութիւն պատրաստելով Կ. Պոլսոյ Գաղղիական Դեսպանատան միջոցաւ կը յղեն Սուլթան Համիտի, նոյն ակնկալութեամբ։ Այս նոր բողոքն ալ անպտուղ կը մնայ, ուստի Քրդերու ձեռքէն տառապող այս մահմետականք վերջի հանրագրութեան մի օրինակն կը յղեն լ Արմէնիի Խմբագրութեան ի հրատարակութիւն։ Այս կարեւոր բողոքագիրն ըստ տեսած է Տիար Մինաս Չերազի լրագրոյ վերջի թուոյն մէջ։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԷՆ

Կ. Պոլիս մայիս 30, 91.

Անցեալ կիրակի տեղի ունեցաւ Ս. Փրկչի ազգային Հիւանդանոցի պարտիզին մէջ Սահմանադրութեան 3ՀՐդ տարեդարձի հանդէսը։ Պէտք է գիտնալ որ հետզհետէ կիյնայ այս մեծ հանդէս իր նշանակութենէն և կը դառնայ զբօսական մի պտոյտ։ Այս տարի բոլորովի անշուք կատարուեցաւ այս հանդէս. ո՛չ Պատրիարք կար՝ նախագահ, ո՛չ ալ եկեղեցականներ, պաշտօնեայք և երեսփոխանք հաճած էին ներկայ գտնուելու այս հանդիսին որ բուն իսկ իրենց պաշտօնավարութեան օրէնքն և ծնունդ տուողն է։ Արեւելք լրագիրը շատ խնդուն և շողշողուն ներկայացուցած էր այս հանդէս, մինչդեռ հանդիսին ներկայ եղող մը չէր կրնար խորապէս չյաւել այն պակասութեան որով լրագիր մը չեղածը կիրականացունէ և կը շփազանցէ իրերը։ Կրճիկեանէն, Սլէաթճեան եպիսկոպոսէն և Վահան վարդապետէն զատ ոչ ոք կար պաշտօնական անձ, մինչդեռ լրագիրը իրարու ետեւէ կը շարէ եկեղեցական հարք, քահանայք, երեսփոխանք ոմանք ևն, ներկայ եղող։ Լրագիրը կըսէ որ Սլէաթճեան եպիսկոպոսը շրջապատեալ եկեղեցականներէ՝ գնաց ճաշէ վերջ հանգստանալու պատրաստեալ տեղը, մինչդեռ ոչ մի եկեղեցական չկար իր շուրջ, իւր ետեւէն կուգային միայն ինը հատ ոստիկանական պաշտօնեայներ, թերևս եկեղեցական ասելով լրագիրը զասոնք կուզէ հասկցունել։ Արեւելքը փոխանակ ձաղկելու այժմեան ազգային պաշտօնեայներ իրենց բացակայութեան և անտարբերութեան համար, լուռ կը կենայ եւ կելլէ հաւատացուցնել ասոր անոր թէ անոնցմէ քանիները իրենց պարտքը կատարած էին։ Ամէն բանասօսուութիւն Սուլթանով կսկսէր եւ Օսմ. Կայսրութեամբ կը վերջանար, ժողովուրդն էլ մինչև վերջ անտարբեր մնաց այդ տեսակ խօսքերը քաջալերելու ծափահարութեամբ։ Վերջապէս ըսենք նաև որ երկու երեք հարիւրի չափ ձիաւոր ընդորս եւ նիզակաւոր զրքեր կը շրջէին խումբ խումբ հանդիսավայրի շուրջը եւ ճամբայներու վրայ, ի դէպ ժամու զսպելու ո եւ է խռովութիւն։ Այսքան տարիներէ ի վեր չտեսնուած էր այսպիսի հսկողութիւն։

Սակէ ուրեմ տասը տարի առաջ եղած ձերբակալեալները, մեծ մասը Վանցիներ, տակաւին կը մնան ի բանտի անտես ամէնքէ. նրանց վրայ աւելցած են եւ ուրիշներ նաեւ քանի մը Թէքիրտաղցիներ, որք իրր թէ նախկին խնդիրներով փախած ու վերադարձած էին այժմ։

Սահմանադրութեան հանդէսէն երկու երեք օր առաջ ոստիկանութիւնը խուզարկեց Կարգադիր մասնախմբի սենեակը եւ գրաւեց ճաշի մաս մը տոմակներ որք անդ կը մնային տակաւին, ասելով թէ առանք Նէարիզէն վաւերացեալ չէին։ Կառավարութիւնը նոյն իսկ արգիլել Սահմանադրութեան հանդէսը, բայց նոր գրգռումների տեղի չտալու համար, քանի մը պաշտնեայ անձանց երաշխաւորութեամբ, թոյլատուութիւն ըրած էր այս անգամ։

Սուլթանն հրամայեր է Բարթուղիմէոս եպիսկոպոսին 2500 ղրուշ ամսական տալ իր բարոյական պաշտնավարութեան համար եւ լսելիս նայելով լսեր է նաեւ թէ թող իր պաշտօնին ղրկուի, քանի որ կարող չէ պատրիարքութիւն ընել, որով կուզէ հասկցունել գուցէ թէ այժմ քանի որ Խորէն չհրաժարիր, իր պատրիարքութիւն կարելի չէ եւ ոչ թէ ան լարող է այդ պաշտօնին։ Այս առաջին եպիսկոպոսն է որ առաջնորդական պաշտօնի վրայ եղած ատեն ամսական կը ստանայ կառավարութենէն։ ԱՐՄԷՆ

Արմէնիա

Ազատութիւն

ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ·

Խմբագիր—Տնօրէն
ՀԱՅԿԱԿ Յ· ԷՔԻՆԵԱՆ·

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Աւէն երկրի համար
Տարեկան Մէկ տոլար

Ո՛և է ծրար կամ գրութիւն ուղղել հետեւեալ հասցէին
TO THE **AZADOUTIUN**,
12 Frankfort St.,
New York City, U. S. A.

Azadoutiun,
LIBERTY.

Published every month
By
Azadoutiun Publishing Company
12 Frankfort St.,
NEW YORK CITY.

H. EQUINIAN,
Editor.

SUBSCRISTION PRICE, free of postage, $1,00 a yaer

Entered at the New York Post Office as second class mail matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՅՈՒԼԻՍ 1 1891·

Յուլիսի կիզիչ արեւը այնչափ չի պիտի կրնայ այրել զոմանս, որչափ ԱԶԱՏՈՒԹԻՒՆի արդար քննադատութիւնք պիտի տոչորեն քանիներու ազգասէր ձեռնարկներն։

Ի բնէ կոյր ծնած անձի մը գոյներու վրայ գաղափար տալն այնչափ մեծ անմտութիւն չէ որչափ է հպարտ անբարտաւանէն օգուտ մը կամ բարիք մը յուսալ ընդհանրութեան համար։

Ազգէկ ատենաբան մը լինելու համար բնական յարմարութիւն ունեցող մէկի մը երկու բան միայն կարեւոր է. կարդալու արժանի մատեան, և խօսելու համար փառաւոր ատեան։

Անցեալ տարի Տօկ Գարիֆիէլեան անուն անձն էր որ ոստիկաններու միջոցաւ կը թափէր ամէն ճիգ նախագահ մնալ Հայ գաղթականութեան ժողովներուն մէջ, իսկ այս տարի Պրուքլինի մեծ կամուրջի հոգաբարձութեան նախագահ և ներկայ նախագահներուն մէջտեղն է այդ կռիւն։ Սոքա կը թուի թէ դրամական շահ մը կ'ակնկալեն այդ պաշտօնէն։ Բայց մեր բարեկամն մենք չենք գիտեր թէ ինչո՞ւ այդչափ ծայրայեղութեան կերթար բարձր աթոռի վրայ նստելու և իջնելու համար։ Ո՞չ ապադէն «թագն չէ որ մարդս թագաւոր կընէ»։

Ցաճիկ կառավարութեան ճիրաններէն ազատելու միակ նպատակաւ շատ անգամ Հայ գաղթականներ եկած են Ամերիկայ, բայց դժբաղդաբար ասոնցմէ շատեր հոյ կեղեքիչներու ձեռքն ինկած են հոս։ Արդեօք մեր գաղթականութիւնն չի՞ կրնար գէթ այս խոչընդոտն վերցնելու համար ջանք մը ընել։ Հայ կեղեքիչներ կան եղեր Բասրայ Կարաբեի շուրջը, և քաղաքիս այլ և այլ կողմերն, որք նորեկ Հայի տգիտութենէն օգուտ քաղելով ապրիլ կերպղեն։ Բայց սոքա գիտնալու են թէ օր մը իրենց առջև կեցած պիտի տեսնեն Օրէնքի խստութիւնն և արդարութեան պաշտօնեայն։

Մեր ընթերցողք կը յիշեն անչուշտ լուսահոգի Արարատեան Գունդն, որ կապրէր քաղաքիս մէջ իրր մէկ տարի առաջ։ Թէ ինչո՞ւ քայքայեցաւ այս Գունդ՝ չունինք այժմ քննել, բայց ունինք յուզելիք մի կէտ որուն համար ժողովուրդն անհամբեր է իմանալ։

Այդ կարեւոր կէտը հաշիւ ս'է որոյ վրայ ոչ ոք բան մը գիտէ Գնդի հին տեղակալէն զատ։

Երբ այս Գունդն դէնքի պէտք զգաց, Տեղակալ Պարոնն հանգանակութիւն մը բացաւ, ի հարկէ Գնդի հրամանաւ, և այդ հանգանակութեան արդիւնքով գնեց քսանի չափ հընած և փտտած հրացաններ։ Բայց մոռացաւ հաշիւ ցոյց տալ այդ մասին։ աւելի զարմանալին սա է թէ դեռ ոչ ոք գիտէ թէ որո՞նք են հանգանակութեան մասնակցող անձինք, որչափ գրամ հանգանակուեցաւ այդ առթիւ, ուստի և քանիի ծախու առնուեցան այդ հնադարեան զէնքերն։ Ժողովուրդը գիտնալ կուզէ այս ամէնն։ և ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ոչ թէ իր, այլ ժողովրդի անունով կը պահանջէ որ հրապարակի վրայ բերուի այդ հաշիւ։

Մասնիչ խաբերաներն ընդհանրապէս ճարպիկ մարդիկներ կը լինին։ Սոցա դիմակը հասարակ դիմակներէ շատ աւելի բնական և ճաշակով շինուած կըլլայ՝ գաղտնիք չի մատնելու համար։ Դոքա ճշմարիտ հայրենասէր կը ձեւանան խաբելու նպատակաւ։ կուլան՝ գրաւուելու, կերդնուն հաւատացնելու և կը քծնին շատ անգամ՝ որսալու համար։ Այսպիսի հայրենասէրներէն զգուշանալը այնչափ խոհեմութիւն է որչափ չէ Վեհ։ Սուլթանի ոտից փոշիներն լղել։ Ամէն ոք պարտի գիտնալ թէ նա որ օր մը կերդնու Աստուծոյ առջև և քիչ ատենէ վերջ կը դրժէ իւր երդումը, կամ կը խոստանայ և կը համակրի այսօր և վաղիւ անարգելով կը մերժէ, և կամ այսօր կը յղանայ և կը վիժէ վաղիւ, ճշմարիտ տիպար մը է մասնիչ խաբերայի։

Եթէ մեր շուրջ նայինք զգուշութեամբ պիտի գտնենք այսպիսիներ որոց պարտականութիւն է ամէն ճշմարիտ Հայի ըսել քաջութեամբ «Եղէ՛ք, ի մէնջ ի բաց գնայք։ Անէծք ձեզ չէք ճշմարիտ Հայք։ Զի՞ կայք, ի մէնջ ի բա՛ց գնայք»։

Շատեր կը արտնջան թէ անմիաբանութիւնն, քսութիւն, նախանձ են։ Հայ ազգի մէջ այնպիսի արմատներ ձգած են որ զայնս իսկ անկարելիութիւն է դարձեր։ Արդարև մինչև ատենս մը կրնանք ըսել թէ այս մեղութիւնք լաւ հիւրնկալուած են մեր մէջ, բայց չենք կրնար համոզուիլ թէ ուրիշ ազգեր մենէ շատ վար կը մնան այդ առթիւ։ Ո՞ր ազգ անմիաբանութիւն չունի իր մէջ։ Ո՞ր ազգի մէջ չկան նախանձք և քսուք։ Անշուշտ մեք մեր պակասութիւններն պէտք է որ տեսնանք, բայց ոճիր է ըսել թէ այդ պակասութիւնք անբուժելի ախտեր են մահացու։ Եթէ մեր աղգէն արեան գաշտերու մէջէն անցնելով կրցած է համնիլ այս աւուր, պատճառն սա է միայն թէ նա արժանիք ունի ապրելու և ձիրքեր ապրիլ կարենալու համար։ Եւ եթէ ճշմարտութիւն լինէր այդ. կարդի հոռետես անձանց քարոզութիւններն, ի վաղուց անտի ի վեր մեր անունն պատմութենէն անկիւններուն մէջ միայն պիտի կընայինք գտնել իրր յիշատակարան մեռեալ ժողովրդի մի յիշատակին։

Ուսթրբէն կը գրեն մեզ հետեւեալը։

«Ինչպէս ուրիշ անգամ ալ գրած եմ, ես համակիր չեմ այժմ ձեր ԱԶԱՏՈՒԹԻՒՆ թերթի հրատարակութեան։ զի այժմէն մը գուշակեմ նորա անյաջողութիւնն, որովհետև հրապարակի վրայ եղած երկուքն արդէն կ'երերան և հաստատուն կացութիւն մը չունին»։

Նամակագիրն Մայիս 26ին կը գրէր մեզ այս տողերն, հետեւաբար առանց գիտնալու թէ ԱԶԱՏՈՒԹԻՒՆի հրատարակութիւնն ապահովեալ է արդէն, և թէ այս թերթ պէտք չունէր երկնչիլ ուրիշ լրագրաց «երերուն վիճակէն»։

Դրամի խնդիրն, որ շատ թերթերու մահուան պատճառն եղած է, ԱԶԱՏՈՒԹԻՒՆի համար լուծուած է արդէն։ Ինչպէս որ ըսած ենք ուրիշ անգամ, նորէն կը կրկնենք թէ մեր թերթի հրատարակութիւնն ապահովեալ է ԵՐԿՈՒ տարիի համար։

Այս առթիւ աւելորդ չենք սեպեր ծանուցանել նաև թէ ԱԶԱՏՈՒԹԻՒՆի ընկերութիւնն իւր թերթի յաջողութիւնը չի վնասուիր դրամական շահու մէջ, այլ այն ատեն միայն զայն յաջողած պիտի նկատէ երբ տեսնէ որ ժողովուրդն կ'օգտուի իւր լրագրի ծառայութենէն։

Այսու հանդերձ չենք ուզեր նաև տպաւորել մեր ընթերցողաց մտքին վրայ սա գաղափար թէ ընկերութիւնս բնաւ պէտք չունի դրամի։ Սա սխալ մը է հիմնովին։ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ եթէ քաջալերուի ժողովուրդէն, աւելի ընդարձակ սահման մը պիտի ունենայ, գործելու և ծառայելու համար։

ՄԵՐ ՆՈՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՆ·

Զուիս Կէտուկի Նոր Վարդանանց՝ նահատակութեան օրն, զոր արժանավայել կերպիւ տօնախմբեն ազգային մի քաղցր պարտականութիւն էր Գաղթականութեանս համար, ցաւալի է ըսել թէ մեծ նշանակութիւն մը չունեցաւ այս տարի։ Թէ Գաղթականական Ընկերութիւնն և թէ Հայկական Միութիւնն, որք քանի մը ամիս առաջ իրարու հետ կը մրցէին լուսնեան՝ Սրբոց Վարդանանց տարեդարձը տօնելու համար, այս առթիւ անտարբերութեամբ միայն փայլեցան, ու այն քանի մը Հայ երիտասարդներն որք ընտանեկան շրջանակի մը մէջ տօնեցին մեր նոր Նահատակաց յիշատակն, ի հարկէ չկարողացան արժանավայել բան մը ընել՝ նոյն աւուր մեծ կոչման համապատասխանող։ Կըսուի սակայն թէ սա վերջինք փառաւոր հանդէսի մը համար թէև պատրաստութիւններ տեսած էին ժամանակին, բայց Հ· Ե· Քրիստոնէական Միութեանոյն աւուր դաշտային մէկ հանդիսին չի վնասելու համար, լաւագոյն նկատած էին յետոյ իրենց պատրաստութիւնն ուրիշ առթիւ միայն օգտակար ընել հասարակութեան համար։

Սակայն այս ամէնն աչքի առջև ունենալով մէկտեղ չենք կրնար ըսել թէ գաղթականութիւնս պարտականութիւն մը չի գործեց այս առթիւ։ Եթէ մեր ազգայինք անկարող էին այլ ինչ ընել, բայց ամէն դիւրութիւն ունէին գէթ պարզ հանդէս մը տալով տպաւորել հասարակութեան մտքի վրայ այն ճշմարտութիւնն թէ Գողգոթայ վրայ խաչափայտ մը կանգնած կար, իբր մէկ ու կէս կանգուն բարձրութեամբ, և այս խաչին վրայ, մեղք է ըսել, սատակած շուն մը կար խաչուած։»

«Ամէնքս մէկէն քարոզք երթանք և բողոքենք, կը պոռային ամէն կողմէ, բայց ես և ....ը հանդարտեցուցինք ժողովուրդն և խրատեցինք որ ամենեին ազգային խենդութիւն մը չընեն. վասնզի բողոքը միասէջ զատ օգուտ մը չի բերեր։ «Եթէ կայ ընելիք մը, ըսի բարձրաձայն, այդ մենք մեր՝ ձեռքով ընելու ենք չաշխատներ. Իչխան, առաջնորդ, հարուստ, Պատրիարք, երեսփոխան ամէնն ալ, վալլայ մէկ թրմին էլ չեն արժեր» խօ մենք էլ մարդ չե՞նք, քանի մէկ էտ վատերուն յանձնենք մեր գործ, քանի որ մենք կրնանք դայն մեր ձեռքով լուծել։»

Այս զարհուրելի տողերն հրատարակելէ վերջ կարեւոր կը նկատենք հոս դնել նաև ամէն օր Պոլսոյ բոլոր լրագրաց մէջ, «Պաշտօնական» վերնագրի մը տակ, հրատարակուած հետեւեալ տողերն։

«Տպագրական Տեսչութեան կողմէ հետեւեալը հաղորդուած է ի հրատարակութիւն։»

«Տիարպէքիրէն, Տրապիզոնէն, Բարբերդէն, Բաղէշէն, Էնկիւրիէն··· թուականաւ եկած հեռագրերու համաձայն, այդ նահանգաց մէջ ևս կատարեալ անպորութիւն կը տիրէ շնորհիւ Վեհ· Սուլթանին։

Այո՛ «կատարեալ անդորրութիւն» յիշեալ նահանգաց մէջ «Վեհ· Սուլթանի շնորհիւ։» Այդ կատարեալ անդորրութեան սիճգրիա պատկերն էր քիչ մը վեր հրատարակուած թղթակցութիւնն, որոյ վրայ առանց բան մը աւելցնելու մեր կողմէն, ընթերցողի խորին ուշադրութեան կը յանձնարարենք՝ տպագրական տեսչութեան պաշտօնական ծանուցումն հետ։

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Յուլիս չորսը, եթէ չենք սխալիր, այս տարի բաղդաւոր օր մը եղած լինիլ կը թուի Հայ Գաղթականութեան համար։ Մինչ վերջի օրեր սա գիտէինք միայն թէ Հայ Երիտասարդաց Թանգարանի Միութիւնն այդ աւուր համար հանդէս մ'ունէր ի ԲոլՀ Փոյնթ՝ իւր տարեդարձի առթիւ, իսկ վերջերս լսեցինք որ Հայ Երիտասարդաց Քրիստոնէական Միութիւնն ալ այդ օր դաշտային հանդէս մ'ունի տալիք ի Սէնդբըլ Փարք։ Սա յայտնապէս ցոյց կուտայ որ Հայ ժողովուրդն չի պիտի կարողանայ վայելել այս երկու հանդէսներն ալ որք տեղի պիտի ունենան միևնոյն օր եւ միևնոյն ժամանակ։ Եւ ուստի տարակոյս չկայ թէ Հայ ժողովուրդն իրաւունք ունի հարցնել այս Միութեանց՝ ո՞ւ է մէկին թէ «ողորմա» հոգիներ, դուք չեմ՞ք կրնար յետաձգել ձեր հանդէսն ուրիշ օրի մը համար։ Միթէ ուրիշ յարմար օր մ'ալ չկ՞ար տօթագին յուլիսի մէջ։

—o—

Սակայն հանդէսներու առատութիւնն չէ միայն որ ուշադրութիւն կը գրաւէ այժմ Հայ Գաղթականութիւնս ստակէ զատ ամէն բան առատ ունի այս օրերս։ Առատ խօսք, առատ քարոզութիւններ, առատ հայրենասէրներ, առատ եկեղեցիներ եւ առատ լրագիրներ։ Մեր եկեղեցիք արդարև միևնոյն Աստուածն է որ կը քարոզեն, թէև տարբեր ճամբաներով, բայց մեր լրագիրներն միևնոյն ճամբայովն այլ և այլ կողմեր քաշքշել կը ջանան Հայ հասարակութիւնն։ Երանի՛ անոնց որք ամէն փայլուն բանի ոսկի չեն ըսեր····։

—o—

Շատ բաներ կը խօսուի ժողովրդի մէջ, եւ զարմանալի զրոյցներ արդարև։ ոմանք կը մեղադրեն Հայ Երիտասարդաց Թանգարանի Միութիւնն ըսելով թէ անոնց հանդիսին մէջ պիտի խմեն» հանդիսականք, և ոմանք ալ այնչափ առաջ կերթան որ կը փորձեն խրատել ուրիշներն որ ներկայ չի գտնուին այն տարեդարձին։ Բայց, Աստուածնիդ կը սիրէք, ըսէք թէ ո՞վ չի խմեր, և ո՞վ չէ խմած իւր կեանքի մէջ։ Եթէ կայ այսպիսի մէկը թող առաջին քարը առնու և քարկոծէ Միութեան անդամներն։ Բայց աւելի գրելէ առաջ ըսել կարեւոր է թէ երբ մենք խմելու վրայ կը խօսինք մեր անարկած խմելիքը չէ թէ Բագոսի տաճառներէն բըղխաց հեղուկն է, այլ այն անարատ ըմպելիքն որ երկրի խորերէն կը բղխի։ Եւ այս է որ Թանգարանի Հանդիսին մէջ պիտի գործածուի յուլիս չորսին, թէ՝ բեռ չաքարի և լիմոնի հեա ա ցաց երբեմն։

—o—

Երբ հանդէսի վրայ կը խօսինք Հայ Երիտասարդաց Քրիստոնէական Միութեան Ցունիս ՃԻՆ տուաց՝ մի դաշտային հանդէսն չենք կրնար մոռանալ, որ տեղի ունեցաւ ի Պէյլօ կղզին, Ազատութեան մեծ արձանի պատուանդանին մոտիկ։ Այդ հանդիսին ներկայ էին իրր 85 անձինք որք երգեցին, պարեցին, զուարճացան և վերջապէս կազդուրանք «բլաւ» վայելեցին՝ մեծ արձանի աչքերուն առջև։ Ուրախ եմք որ այդ արձանն իւր այդ աւուր տեսարաններն ուրիշի չի պիտի կրնայ պատմել, բայց կը ցաւինք որ հոն ներկայ եղող օտարականք ալ արձաններ չէին այդ օր։ Երանի թէ «բլաւ»ը բերուած ու բաժնուած ատեն այդ օտարականք Զուլի կնան պէս քարանային գէթ մի քիչ ժամանակի համար, որպէս զի չի կրնային մեր ազգայնոց վրայ անախորժ գ զարիար մը ձեւացնել։

Հայրը—Ծօ գարշելի, քեզ հազար անգամ պատուիրած չեմ որ գիշերներն դուրս չելնես։ Ըսէ նայիմ, ուր էիր գացեր։

Տղան—Հայկական Միութեան գացեր էի, Հայր։

Հայրը--Վայ կիտի կէպէրէ՛ք, այդչափ մարդ եղար հա։ եթէ ուրիշ անգամ անանկ ազգի մազգի տայիր ժողովներու երթալու ըլլաս քու աա ճիպդ կը կոտրեմ։

Տղան—Հը, հը, հը, ամէն պատուաւոր անձինք Վերթան այդ ժողովներուն, Հայր, և ես ալ պէտք է որ հոն գտնուիմ միշտ գէթ քեզ ներկայանելու համար։

Գերմանացի երիտասարդ մը որ բնաւ անգլերէն չէր գիտեր, վերջերս ամուսնացաւ Ամերիկուհիի մը հետ, որ ոչ մի բառ կը հասկնար Գերմանացւոց լեզուէն։ Սէրը բաւական մեծ դեր մը կատարած էր սա երկու սիրականներուն մէջ հասկացողութիւն մը յառաջացնելու համար։ Նա ձեռքերուն խօսիլ և աչքերուն հասկնալ տուած էր իւր մեծ զօրութեամբ։ Սիրոյ լեզուն տիեզերական է։ Ամենէ հարկաւոր բաներն այդ ճշմարիտ վէյարիւքի մէջ զոյգ մը սիրող սրտեր են միայն։

—Գլուխս կը ցաւի· դեղ մը պատմէ ինձ։

—Գնա Տօքթէօրին քով, դեղ մը կուտայ քեզ։

—Հը՛մ, Տօքթէօրին՞ քով··· Աստուած չընէ։

—Ինչ՞ու, եղբայր։

—Վասնզի գլխս ցաւի պատճառն ինքն եղաւ անցեալ օր, երբ իւր գրասեղանէն կտոր մը տուաւ ինձ որ կրնեմ և հանգիստ ննջեմ։

Մի խրատեր երբէք ուրիշներն ըսելով թէ ջուրը մի մտնէք լողալ սորվելէ առաջ, զի լողալ սորվելու համար մարդ պէտք է որ նախ ջուրն իջնէ անպատճառ։

ԱԺԱՆ ՎԱՐՔԱՏՈՒԹԻՒՆ·

—Ինչ՞ու համար, Հայրիկ, ատենախօսներն կամ դերասաններն կը ծափահարեն միայն։

--Որովհետև անկէ աւելի ձայն հանող ու միանգամայն ոժան վարձատրութիւն կարելի չէ գտնել։

--Հապա կղերներն ի՞նչ չեն ծափահարուիր եկեղեցւոյ մէջ։

--Վասն զի անոնք ծափահարութենէ աւելի բան կ'ակնկալեն մէջէն՝, դրամ։

—o—

«Եթէ կուզես որ ամէն մարդ գիտնայ թէ կապրիս, ձայն մ'ըրէ։ Սա է կենաց ամենէ լաւ մի նշանն։ Եւ եթէ գործի տէր մէկը ձայն չի հաներ, գործ չունի նա գործի մը մէջ գտնուելու։»

(Ն· Ե· Վօրլտ)

Գրաստութիւն

ԼՈՒՐԵՐ.

Պ. Ս. Յովհաննէսեան որ երկու մանրավաճառի խանութներ ունէր քաղաքիս Վաշինկթըն և Էլսորիճ փողոցներուն մէջ, վերջերս կեցուց իւր վճարումներն 5577 տոլարի բացով մը, որոյ փոխարէն 2.16 տոլարի պահանջ կայ այլ և այլանձանց քով, և 200 տոլարի արժողութեամբ ապրանք երկու խանութներու մէջ։ Պ. Յովհաննէսեան պարտատեաց մէջ Տ. Մ. Մանկասարեանի պահանջն ամենէ մեծն՝ է լինելով 2255 տոլար, և Տ. Գ. Բարսեղեանի պահանջն է 700 տոլար։ Պարտատիրաք, կըսուի թէ, իրենց դրամն եթէ ամրողջութեամբ չի կորսնցուցնեն, անոր մի ամենափոքր մասն հաղիւ թէ ստանան։

--Վարդան Գալուստեանի մահուամբ Կ. Պոլսոյ բանտին մէջ կը մնան հինգ հայ բանտարկեալներ, որք կըսուի թէ պիտի աքսորուին հեռաւոր տեղեր։ Ձերբակալութիւնք կը շարունակուին Թրքաց մայրաքաղաքին մէջ։ Ս. Պատրիարքն սպառնալից նամակներ կընդունի ամէն օր։

--Լ'Արմէնի կը ծանուցանէ թէ Տ. Ա. Մէյլէթ անուն Հայագէտն որ Վիէննայի մէջ՝ Մխիթարեանց քով ուսած է Հայերէն գրաբառ լեզուն, մեկնած է Եւրոպայէն Պոլիս և Թիֆլիս երթալու՝ աշխարհաբառ լեզուն ուսանելու համար։ Սա երիտասարդ հայագէտն որ հետաքրքրուած է նաև Տ. Ա. Քալիէրի դասախօսութեանց Փարիզի Արևելեան արդի լեզուաց վարժարանին մէջ, մտադիր է նաև երթալ Էջմիածին՝ Վանքի հայ գրչագիրներն հետազօտելու համար։

--Պանքը Նիւզի մէջ Տ. Մ. Փէշթիմալճեան, որ կը ընակի ի Պոսթըն, հրատարակել սկսած է մի անգլերէն նորավէպ Արմենուհի անուամբ։ Սա վէպի նիւթն ազգային է որով հեղինակն Հայոց վիճակն ու Թրքաց բարբարոսութիւններն կը ջանայ Ամերիկացւոց առջև դնել։

--Կ. Պոլսոյ լրագիրներն կը ծանուցանեն թէ կաթուղիկոսական ընտրութիւնն 1892ին ձգուած է։ թէ ոչ պիտի լինի Հայրապետն և ինչպէս պիտի տեղի ունենայ այդ ընտրութիւնն հնձառոտ խնդիրներ են։

--Արմէնիաի կը գրեն Կ. Պոլսէն թէ Արեւելքի ծանօթ աշխատակիցն Հրանտ բանտարկուած է մի քանի օր Պետրոս անուն վարժապետի մը հետ, և սոցա տունն խուզարկուած է ոստիկանութեան կողմանէ։

--Պ. Յակոբ Տալգրանեան անուն կեսարացի երիտասարդ մը որ Ուօրսաս Այլընտ կղզւոյն հիմարանոցն ղրկուած էր բաւական ատեն առաջ, այժմ առողջացած լինելով դրած է իր բարեկամաց որ ղինքն դուրս բերեն այդ հիւանդանոցէն։ Կը լսենք թէ Տ. Սարգիս Թէլֆէյեան պիտի ջանայ կատարել յիշեալ անձի խնդիրն, եթէ իրօք առողջացած է նա։

--Պ. Պէչոյեան անուն երիտասարդն որոյ պարանոցն ՀԱՍուած լինելով իրր մէկ տարի առաջ քաղաքիս մէկ երկաթի գործարանին մէջ, բաւական ատեն առաջ Ուօրսաս Այլընտի հիւանդանոցն ղրկուած էր։ Բայց այժմ արձակուած է այդ տեղէն և կը շրջի՝ գործելու անկարող և խիստ կարօտ վիճակի մը մէջ։ Բժիշկք կըսեն թէ Պ. Պէչոյեան պէտք ունի ՁԼուխրն անցուցնել մի մանաւոր գործիք որպէս զի առով կարողանայ գործել։

Խնդիրերիտասարդն ոչ թէ կարողութիւն չունի գնել այդ գործիք, այլ անկարող է իւր օրական ամենահարկաւոր ծախքերն ճարել։ Տ. Ճորճ Մինասեանի միջոցաւ կըսուի թէ դատ պիտի բացուի յիշեալ գործարանի տիրոջ դէմ։

—Անցեալ երեքշաբթի օր Սրբազանապատիւ Յովսէփ Վ. Սարգիսեան Ուսթրէն քաղաքս հասաւ՝ տեղւոյս գաղթականութիւնը այցելելու։ Նորին Սրբազանապատուութիւնն Ս. Պատարագ պիտի մատուցանէ յառաջի այս Կիրակի օր Ս. Ասողերան եկեղեցւոյն մէջ։

ԱՌԱՆՑ ԱՁԳԵՐՈՒ ՄԱՆՈՒԿ ՄԸ.

Վերջերս քաղաքիս Ըսթէն. թըն փողոցի մէջ բնակող Տիկին Ատօլֆի անուն մայր մը ծնաւ մի մանուկ առանց աչքերու։ Բժշկական աշխարհի մէջ բաւական մեծ շշնկոյց հանեց այս դէպք որ առաջինն է կատուած։ Հորածին մանկան աչքերուն տեղ քիչ մը փոս է միայն, և կըսուի թէ աչքի և ականջի բժիշկներ պիտի փորձեն այս փոսերն ծակել, եթէ ծնողքն հաճութիւն տալ ուզեն։

ԲՈՂՈՔՈ ՁԱՅՆ ՄԸ

ՊՐՈՒԷԼԻՆ, Յունիս 2.

Ձեր լրագրի վերջի թիւը ժամանակին հասաւ ինձ, և շատ ուրախացայ, ինչու որ աղէկ գիտէք թէ ես անոր հրատարակութեան և շարունակուելուն փափաքողներէն մին եմ։ Բայց շատ ցաւեցայ երբ կարդացի Տքթ. Տօնճեանի նկատմամբ գրուած յօդուածն։ Նախ Պօլսոյ Հայ Տիկնայք ականջ չենկախել ամէն ծանուցման։ Ինչպէս բոլոր բժիշկներուն նոյնպէս Տքթ. Տօնճեանին վիպական կը վկայէ թէ նա կարող է բժշկել կանանց հիւանդութիւնն. և միթէ ձեր կարեւոր պաշտօն վարող բժիշկներն կարծող են Տքթ. Տօնճեանի բժշկել չկրցած հիւանդութիւններն բժշկել։ Ցիշեալ Տօքթորին Թրքական գորգ ծախելն յանցանք մ'է արդեօք. ձեր յիշած կարեւոր բժիշկներուն առաջինը, Տօք, Տարեան մածուն կը վաճառէ այժմ, և միթէ մածուն ծախելն յանցանք է։

Մեր կեանքը կարճ է, վիճաբանութիւններով չանցնենք. գործեր կան տեսնելիք, և գործեր կատարելիք։

Խնդրեմ անկիւն մը շնորհել հաճեցէք երկտողիս ձեր թերթին մէջ՝ հաստատելով անոր անվախ, աներկիւղ և անկողմնակալ ըլլալն։

Տքթ. Զ. Բ. ԹԷՈՏՈՐԵԱՆ

ԱՌ ՀԱՅԿԱՆՈՒՇ.

Հայկանո՛ւշ...
Ինչ աւելի քաղցր անուշ
Կրնան տեսնել իմ աչքեր
Քան վարդ այտերդ այդ քնքուշ։

Անմեղ կուսանք երբ տեսնեն
Նախանձելով քեզ՝ կը սեն
Մահկանացու չէ այս ոք
Հրեշտակ մ'է նա անհոգ։

Երիտասարդք երբ լսեն
Քո՞ մեծ համբաւ, միշտ կը սեն
Երթանք տեսնենք Գեղուհին
Գեղեցկութեան Դիցուհին։

Ամէն անոնք որ կուգան,
Ցուխտ քո գեղջդ աննման.
Կըսեն սիրրոն ես քնքոյշ,
Ոհ աննմանդ Հայկանուշ։

Երբ կը տեսնեն որ վարդեր,
Քու այտերուդ են տուեր
Կարմրատեսիլ իրենց գոյն,
Հրապոյր, գիւթիչ փափկութիւն։

«Կըսեն ինչ՞ու այդ սոխակ
Անտառին մէջ միս մինակ
«Ծրջի, թռչի ի նանիր
«Իւր սիրելին ի խնդիր։

«Թող սոխակը վազէ գայ,
«Իր սիրելին հոս գտնայ.
«Զի այս կոյսի այտերէն
«Կարմիր վարդեր կը կաթեն։

Հ. Է.

Վ Ր Է Ժ

Եկէք Հայեր ուխտ ընեմք հոս միութեամբ
Զուխտ Կէտուկի կիրճերն երթալ քաջութեամբ;
Լուծել վրէժ սուրբ հերոսաց մեր ազգին
Զարդել Թուրքերն՝ մեր ոխերիմ թշնամին։

Ելէք, բաւ է, Հայե՛ր, դառնանք Հայրենիք
Կառնենք Թրքի դէմ իրրև մարդ և մեռնինք.
Սուրբ նահատակ ըլլանք որպէս մեր Հայրեր
Ազատելով մեր անպաշտպան եղբայրներ։

Օհ՛, քաջ Հայեր, սուր ի ձեռին
Շուտ ընդ փոյթ,
Դէպ Զուխա Կէտուկ երթանք ստոր
և անդութ
Տկար Թուրքին ջախջախելով, հոն
իյնով
Մեր նոր քաջաց կանգնել արձան
մեծ կոթող։

Ա. Ս. ՍԱՍՈՒՆ.

Այն բանն որ ուրիշի մը կը կը վնասէ երեւան մի՛ հաներ, եթէ գաղանի մնալն աւելի մեծ վնաս չի բերեր։

Ուրիշի դէմ ըսուած ո՛ և է դէշ բանի մի՛ հաւատար եթէ զօրաւոր պատճառներ չկան։

Ոչ թէ բարի եղիր պարզապէս, այլ բարի եղիր բանի մը համար։

Թեզ պէտք չեղած բանն մի գներ, հոգ չէ եթէ ժան ալ եղած ըլլայ։

7777 ՏԱՐԵԿԱՆ ՄԷԿԸ.

Իւլանտացիի մը հրաման կը ղրկուի որ դագաղ մը չինէ ննջեցեալի մը համար, և դագաղին կողքին վրայ գեղագրէ այս բառերն «Միքայէլ Օ Ֆարէլի, քսան և ութն տարեկան»։ Վարպետ Իւլանտացին գործը գլուխ հանելէ վերջ ննջեցեալի անունն կը գեղագրէ, բայց «քսան և ութը» բառը հարկ կը լինի թուանշանով գրել՝ սեղմեցնելու համար բառերն որոշեալ սահմանի մը մէջ։ Բայց որովհետև 28 գրել չէր գիտեր վարպետը, մտածել սկսեց, և վերջապէս գտաւ միջոց մը։ Ինքն գիտէր միայն 7 թուանշանն գրել, և որովհետև չորս անգամ 7ը 28 կընէր, ուստի չորս 7 թուանշան դրաւ իրարու քով, ու դագաղն ղրկեց ննջեցեալին տունն, ուր ոչ ոք ուշադրութիւն դարձուց թուանշաններուն վրայ։

Երբ դագաղն գերեզմանի փոսին քով դրուեցաւ, քահանան համառօտ դամբանական մը խօսիլ սկսեց, յորում ըսաւ իմէջ այլոց թէ «ոհ, նա ազնիւ երիտասարդ մ'էր, որ այժմ հոս կը ննջէ խաղաղ։ Նա հազիւ տեսած էր...» Քահանան այս պահուս ծռեցաւ որ դագաղի արձանագրութեան մէջ Միքայէլի տարիքը տեսնէ։ «Նա միակ» ըսաւ Նորին արժանապատուութիւնն նորէն՝ աւելի մօտենալով դագաղին, «եօթն եօթը հարիւր և եօթանասուն եւ ութը տարեկան էր։»

--Անցեալ օր շատ մը երիտասարդներ հաւաքուեր կը խօսակցէին Կրանտ Հօթէլի մէկ սրահին մէջ, կէս օրի ճաշէն անմիջապէս վերջ։ Արդարև ոչինչ կարեւոր նիւթ չունէին խօսակցութեան։ Մէկ անկիւնն լռիկ մնչիկ նստող աղեզարդ ծերունի մը, որ քթի տակէն կը ծիծաղէր սա երիտասարդաց պարապ խօսակցութեանց վերայ, ոսքի ելնելով ըսաւ--Տղաք, եկէք որ ձեզ հարցում մը ընեմ, և տեսնեմ թէ ո՞վ կարող է ուղիղ պատասխանն տալ։

--Ի՞նչ նուէր ունիս հարցուցմին, ամենէն յաջող պատասխանն տուողին։

--Սնտուկ մը Հավանայի ընտիր սիկար, ըսաւ ծերուկն։

--Լաւ, հարցուր, ըսին երիտասարդք և ծերուկին բոլորտիքը շարուեցան.

--Կուզեմ որ ինձ ըսէք թէ որ կարգի ստախօսներն են որ դիւրաւ կը բռնուին իրենց սուտերուն մէջ.

--Գործէ ինկնող վաճառականներն, ըսաւ մին։

Պատասխանն ուղիղ չէր։

--Բժիշկներն են, ըսաւ ուրիշ մը։

--Նորէն սխալ։

--Անհամակիր և խնալու մօտ խմբագիրներն, որք ամէն բան բացի տալէ վերջ կը ջանան ժողովուրդն խաբել սաւ երրորդ մը հաստատուն ձայնիւ որ կարծես վստահ էր իր ըսածին վրայ։

Պատասխանն ուղիղ էր։

Ծերունին անմիջապէս դուրս ելաւ քանի մը բոպէն դառնալու համար, բայց բնաւ չի դարձաւ, զի նոյն ինքն սատանան խմբագիր մէր ժէր առանց համակրողներ ունենալու։

Էր կը փափաքիս Պ. Գ. ժողովներու մէջ նախագահ լինիլ մէշտ։

—Հ'մմ... չե՛ս գիտեր։ Կուզեմ աղէկ վարժուիլ իշխելու արհեստին մէջ, որպէս զի օր մը ազգ մը կառավարել կարողանամ։

--Կեցցե՛ս։ Կերևի թէ դու Տիգրանակերցի մը չես, զի անոնք բարձրախոհ չեն ըլլար։

—Պարոն Նախագահ, ինչ՞ու թոյլ չես տար որ Պ. Թ. խօսի։

—Որովհետև չեմ ախորժիր անոր իմ անձի դէմ ըրած քննադատութիւններէն. պէտք է որ լռէ, կամ դուրս ելնէ այս սրահէն։

—Եթէ ուղիղ գործէք, Պ. Նախագահ, ոչ ոք չի քննադատեր զձեզ։

—Ի՞նչ, ի՞նչ, դու ալ լռէ, կամ դուրս ել հիմա։

ՄԱՆԿԱԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Մանուկն —Մայրիկ, ինչ՞ու համար էշերն տգէտ են։

Մայրը— Վասն զի էշերու ականջներն ու մազերն երկայն են շատ։

Մանուկն—կը զարմանամ, ուրեմն ամէն երկայն մազ և ականջ ունեցողս մանկանացու տգէտ է. այնպէս չէ՞։

--Տիկին և պարոն Ա. երբ իրենց ութը տարեկան հիւանդ զաւակի անկողնոյն քով նստած էին անցեալ օր, Տիկինն հարցուց զարմացմամբ։

-Քա կարապետ աղա, չեմ գիտեր թէ ի՞նչ է պատճառն որ երբ Տօքթէօրը զաւակիս անկողնոյն կը մօտենայ հիւանդին վիճակը զգալապէս աւելի գէշ կըլլայ միշտ։

--Գուցէ մանուկն կ'երկնչի անկէ։

Մանուկն գլուխը վեր առած--այս պատասխան տուաւ.

--Հայր, եթէ այդ բժիշկն շարունակէ հոս գալ, ինձ բնաւ առողջանալիք չ'կայ, գուցէ դուք ալ հիւանդանաք։

--Ինչ՞ու համար զաւակս։

--Որովհետև բերանն սատակի կը հոտի. և երբ քովս կը մօտենայ ինձ հետ խօսելու, գլուխս կը դառնայ ու սիրտս տակն ի վերայ ըլլալ կ'սկսի։

—o—

ՍԵՂՄԻՆ ՄԸ ՎՐՅԵՑ.

Մանուկն (հիւրին —Պ. Գրիգոր, կաղաչեմ գինիդ խմէ որ տեսնեմ թէ ինչպէ՞ս կը խմես։

Գրիգոր—Ինչ՞ու համար խմելը կը փափաքիս տեսնել, սիրելիս։

Մանուկն —Վասն զի մայրս անգամ մը ըսած է թէ իշու մը պէս կը խմէք։ (Մօրը դառնալով) այնպէս չէ՞, մայրիկ։

—o—

ՆՈՐ ԹՈՒՄԲԱՆՈՒԹԻՒՆ.

—Մայր, մէկ մէկ ալ քանի՞ կընէ։

—Երկուք, տղա։

—Վատ՞ահ ես։

—Նստարակոյս։

—Ուրեմն վարդապետը սխալ ըսաւ երէկ երբ քրոջս պսակի արարողութիւնն կը կատարէր։

—Ինչ՞ու համար, հարցուց մայրը

—Որովհետև, «երկուքը մէկ պիտի ըլլան» ըսաւ։

—o—

ԽՆԶՈՐՆԵՐՈՒ ՀԱՇԻՒԸ.

Վարժուհին— Կարապետ, եթէ հայրդ քեզ երկու խոշոր եւ գեղեցիկ խնձորներ տայ, եւ մայրըդ ալ երկու խակ և պղտի խընձորներ տայ, ընդ ամէնն քանի՞ խնձոր ունեցած կըլլաս։

Մանուկն—Երկու խնձոր միայն, Տիկին

Վարժ.—Ինչպէ՞ս, տղաս, բացատրէ նայիմ։

Մանուկն—Հօրս տուածներն անմիջապէս կերած կը լինիմ։

—o—

ՍԻՐՈՒՑ ՆՇԱՆ ՄԸ.

—Մայրիկ, դու շատ կը սիրե՞ս հայրս։

—Ինտարակոյս, տղաս։

—Բայց ես չեմ հաւատար,

—Ինչ՞ու։

—Որովհետև ուրիշներն պարոն կը կանչեն իրեն, իսկ դու անունն անգամ չիտակ չես կանչեր։

Մայրիկ, եթէ հնձղուկ մ' սպաննեմ, Աստուած կը հաշուէ զայն։

—Ինչ ըսել կուզես հարցուց մայրը։

—Այսինքն երբ ճնճղուկ մը սպաննեմ Աստուած ատիկայ իմ վրաս մեղք մը կը հաշուէ։

—Անտարակոյս, տղաս։

—Ուրեմն այսօր զԱստուած զլաղած թողուցի մինչև երեկոյ։

—Ինչ՞ու։

—Որովհետև բոլոր օրը ճընճղուկներ սպաննելով անցուցի։

—Կարելի չէ չափել մէկի մը քաջարարութիւնն իւր գրագրի կամ ծառային բարձրաձայն խօսած կամ հրամայած ատեն. սպասէ որ զայն տեսնես իւր կնկան հետ խօսած ժամանակ։

Նէ--եթէ իրօք գիս կը սիրես փոքրով մը հատատէ զայն։

Նա--Ամենայն հաճութեամբ, սիրելիս. նայէ, սա գետն բաւական խորունկ է և արագնթաց. նետէ դուն զքեզ ջուրին մէջ եւ ես անմիջապէս ետևէդ գալով պիտի ազատեմ զքեզ։

Սորվեցուր մանկան կարիճ լինիլ և ճշմարտախօս, և քու պարտքդ կատարած եղար։ Մնացեալն իրեն միայն անկէ՝ սորվիլ կեանքի մէջ։

Երիտասարդն—Օրիորդ, երանի թէ կրնայիք գիտնալ թէ որչափ կը սիրեմ զձեզ։ Չկայ զոհողութիւն մը որ պատրաստ չեմ ընել ձեզ համար,

Օրիորդն—Իրա՞ւ կըսէք։ Այդչա՞փ կը սիրէք զիս ուրեմն։

Երիտասարդն—Անտարակոյս։ Կրնաք փորձել զիս։

Օրիորդ—Լաւ, ուրեմն ամուսնացէք իմ մեծ քրոջս հետ որ կարգն ինձ գայ շուտ։

Մարդիկ երկու աչք և մէկ լեզու ունին, որպէս զի երկիւղ տեսնեն և միանգամ խօսին։

—o—

Ո՜հ, ինչ բարի լուր, ըսաւ Տիկին Գ. իր էրկան անցեալ երեկոյ, մեր փոքրիկը խօսիլ սկսեց. այսօր իւր առաջին բառը արտասանեց։

—Իրա՞ւ, շատ ուրախ եմ։

—Այո՛, սիրելիս, երբ կենդանիներու ցուցահանդիսին մէջ, կապիկներու վանդակին առջև կեցած էի այս առաւօտ, մանուկն թևերը տարածելով կոչեց «ո՜հ հայրիկ»։

Աւելի քիչ դժուարութիւն կայ երիտասարդութեան ատեն ուսանելու, քան ծերութեան ժամանակ ազէտ մնալու մէջ։

Մարքիզ Տի Բուտինի—(իւր գիշերային հանդերձներով խելագարածի մը պէս վար վազելով) ինչ էր պատճառն այդ ահաւելի շարժին որ ցնցեց զմեզ քանի մը րոպէ առաջ։

Սպասաւոր--Լրագրերն ըսաւ թէ վառօթի մթերանոց մը պայթած է քաղաքին դուրս։

Մարքիզ Տի Բուտինի--Փառք Աստուծոյ։ Ես կարծեցի թէ Պլեյնէն մի ուրիշ նամակ եկած էր։

Զօրաւոր մարդիկ կամք ունին, իսկ տկարները փափաք միայն։

Անցեալ օր Նորեկ մահմետականն մը որ մէկ տեսակ կերակուրի անուն միայն գիտէր, Պավրիի ճաշարաններուն մէկը գնաց ընթրելու համար։ Երբ ծառան մօտեցաւ և հարցուց արտաքին ձեւերով թէ բան մը կուզէ՞ր խմելու։ Թուրքն քիչ մտածելէ վերջ պատասխանեց—չարապ իսթէրիմ։

Սեւամորթ ծառան սատակի կատղելով բռնցի հարուած մը տուաւ տգէտ Թրքի երեսին որոյ քիթը բերանը արիւնով լեցուեցաւ։

Օրեր անցնելէ վերջ խեղճ Թուրքն հազիւ կրցաւ հասկնալ թէ գինիին Տաճկերէն անունը Ամերիկացւոց համար անտանելի հայհոյութիւն մ'էր միայն։

Հ. Ե. Ք. ՄԹՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻՆ ՄԷՋ

Հայ երիտասարդաց Քրիստոնէական Միութեան վերջին նիստին մէջ անդամ մը ի սք առնելով բողոքած է Ցուլիս շաբաթին հանդէս մ' տալու որոշման դէմ։ «Մենք տարի մ' առաջ ըսած է առնեմ պարոն, կարդ ազեր էինք Թանգարանի Միութեան անունագրին մէջ թէ անոնց տարեդարձ պիտի տուէր յուլիս շաբաթն, այս դիտաւորով նոյն օրն տարբեր հանդէս մ' մեր կողմէ տալ։ ազէկ տգէտ ութիւն չը ունի ժողովրդին վրայ և բարութիւն կ' ձգէ երբ բարեգամ միութեան մէջ։ եւն, եւն, այս պարոնի համար բան է խմէք այլոց Տ. Մի ասեան որ իրաւունք տուած է անոր։ կը լսէք նաև թէ նոյն նիստին մէջ որոշած է Միութեան մի քանի ներկայացուցիչներ յղել Թանգարանի Միութեան հանդէսին, որպէս զի մի գուցէ բարութիւն իր այ երկու դոյր միութեան մէջ։

ՊԱՏԱՄԱՆՆԵՐ.

Պ. Ա. Նիւ Եորք.—Ձեր նամակն չենք կրնար հրատարակել, սա միայն պատճառաւ որ ձեր հաղորդածներն արտասահմանի լրագրաց մէջ կարդացած ենք արդէն։ Այն լուրերն որք իրենց թարմութիւնն կորսնցուցեալ վերջ անընթեռնելի կը դառնան, յարմար չէ դնել զայնս ԱՁԱՏՈՒԹ ի՞նչ նման լրագրի մը մէջ։

—o—

Պ. Օ. Պօսթըն.—Ձեր թերթը կը չարունակենք։ Սրդեօք մեր պարտուց փոխարէն ԱՐԱՐՈՏ ընդունած չէ՞ք բնաւ։

Պ. Ա. Լօվել.— Այն երկու անձանց հասցէներն ալ հաճեցէք ղրկել մեզ։

—o—

Պ. Բ. Ուսթըր.—Այդ հինգ անձանց ձեր խնդրածին համեմատ թերթ կը ղրկենք զանոնք գոհ ընելու համար։

—o—

Պ. Գ. Նիւ Յորք.— Շնորհակալ ենք ձենէ։ Ձեր գրութիւնն մասամբ միայն կը հրատարակենք, ձեզ ծանօթ պատճառներու համար։

—o—

Պ. Բ. Գ. Միլլինկթըն--Ձեր գրած ոտանաւորն լաւ է. եթէ աշխատիք քիչ ատեն վերջ աւելի աղէկներն կրնաք գրել, զի, որչափ կը տեսնենք, բանաստեղծ մը լինելու ձիրքերն ունիք ձեր մէջ։

—o—

Պ. Լ. Մօնթրէօլ, Քանատա— Մեր Յունիս 4 և 26 թիւ նամակներուն պատասխանն չտալնք։ Արդեօք ընդունելի՞ք զայնս։ Հաճելի՞ք գրել։ Ձեզմէ լսել կը սպասենք։

—o—

Պ. Փսնթաքէթ-- Ձեր նամակըն հասած է մեզ։ Ձեր խնդիրն կը կատարենք։

Ա. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԷՍ ԵՒ ՄԵԾ ԺՈՂՈՎ Հ. Ե. Թ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՑ ՅՈՒԼԻՍ ԳԻՆ Ի ԹՐՔՆԵՐ ՀՕԼ

ԲՕԼԷԾ ՓՕՅՆԹ Ն. Ե.

Ժողովը պիտի սկսի առաւօտեան ժամը իններն, որմէ վերջ հանդիսականք դադար պիտի ունենան և չորջագային մինչև ժամը մէկ. որմէ վերջ պիտի սկսի հանդէսն։ Ժողովին մասնաւորապէս հրաւիրեալ են Միութեան Անդամք, որք պիտի տեսնեն Թանգարանապետի հաշիւներն ու ընտրութիւններ ընեն։ Այս ժողովին փափաքող ազգայինք ևս կրնան ներկայ գտնուիլ։

Հանդէսն հրահանգիչ և օգտակար ընելու համար ամէն ջանքեր եղած են։ Հանդիսականք գոհ պիտի լինին ներկայ գտնուելով այս նշանաւոր դումարման։

Ի մէջ այլոց հանդիսականք նշան պիտի զարնեն մասնաւոր հրացանով մը և ամէնէ աղէկ զարնող անձն աղուոր «չիֆթէ» հրացան մը նուէր պիտի ընդունի. Նոյնպէս տեղի պիտի ունենայ վիճակահանութիւն մը որմէ մէն մի անձ բան մը պիտի չահի անպատճառ։

Հանդիսավայրին մէջ հանդիսականք դիւրութիւն ունին ճաշելու, որոշեալ գնով մը։ Այս մասին մասնաւոր կարգադրութիւն եղած է սրահի տիրոջ հետ։

Մուտքը ձրի է բոլորովին, ճանապարհի ծախքը եւիսս կողմէն քսան սենթ է միայն. և ճամբորդութիւնն է խիստ զուարճալի։

Նաւը կը մեկնի ամէն ժամը անգամ մը, և կը մեկնի քաղաքիս Իսթ 99րդ փողոցի նաւամատոյցէն։

Աւելորդ է գուցէ ըսել թէ ԲօլէՏ Փօյնթ ամառնային զբօսավայր մ' է գեղեցիկ վրայ անուտներով շրջապատուած։

Մտից սամսերն ձրի կը տրուին ամէն փափաքողի. կարելի է զայնս ընդունիլ Թանգարանի Միութեան անդամներէն և լրագրոյս խմբագրատունէն։

Հ. Ե. Ք.

ՀԱՆԴԷՍ ԴԱՇՏԱՅԻՆ

ՄԷՆԴՐԱԼ ՓԱՐՔ, ՆԻՒ ԵՈՐՔ.

ՅՈՒԼԻՍ 4, 1891, ԱՌԱՒՕՏԷՆ ՅԸ-ԺԱՄ 7 ԵՐԵԿՈՅԵԱՆ։

կազդուրանք, ճաշ եւ Դաշտային Զուարճութիւնք։

Գին 30 Սենթ։

Հանդիսավայրն է Մէնդրալ Փարքի «Նորթ Մէյնց» կոչուած դաշտը, որ Պարտիզին 96երորդ փողոց և 8րդ Ավընիւին մօտ է։ Շուգեկառքով եկողք պէտք է հարցնեն «Էլրվէյթըտ» կառքը նոյն տելով 93րդ փողոցի կայարանն ենչն։ Հանդիսականք Պարտիզին ոստիկանաց «Նորթ Մէյնց» հարցունելով դիւրաւ կրնան հանդիսի դաշտը։

Արշալոյսի

ՖԻՆԹՕԿՐԱՖ

ԷՏԻՍԸՆԻ ՆՈՐ ՀՐԱՇԱԼԻՔԸ

—o—

Ասկէ իբր չորս տարի առաջ մեծ եղեքտրագէտն Հանդիսի մը մէջ մի յօդուած կը հրատարակէր ծանուցանելով թէ նոր մեքենայ մը ունէր ստեղծելիք, որ շարժումներ արձանագրելով ցոյց պիտի տար զայնս, ինչպէս որ ֆօնօկրաֆը ձայնը կարձանագրէ։

Ֆօնօկրաֆին, որ սոյն եղեքտրագէտին մի հրաշալիքն է իբր հինգ տարի առաջ հնարուած, անշուշտ անծանօթ չէ մեր ընթերցողաց։ Եթէ զայն չի տեսնողներ չի լսողներ կան, կրնան մեծ դեղարաններու մէկին երթալ և հինգ սէնթ վճարելով տեսնել և լսել այդ հրաշալի մեքենան որ կը խօսի, կ'երգէ, և իրեն յանձնուած ո՛և է ձայն, խօսք կամ եղանակ ամենայն հաւատարմութեամբ կը պահէ իր մէջ՝ ի հարկին զայն հրապարակ ածելու համար։-

Այս գիւտ ընելէ վերջ երբ Էտիսըն Ֆինթօկրաֆի մասին գրեց իբր հինգ տարի առաջ՝ շատեր, մանաւանդ նախանձոտ եղեքտրագէտներ ծիծաղիլ սկսեցին, զի բնաւ չէին հաւատար թէ մի այդպիսի գործիք կրնար հնարուիլ։ Սակայն Էտիսըն, հաստատամտութեան և կամքի այդ կենդանի տիպարն, բարկանալով իւր նախանձորդներու կատակէն աւելի եւ աշխատիլ սկսեց և այսօր ինքն է որ կը ծիծաղի իւր նախանձորդներու քթին, զի շարժումն արձանագրող մեքենան հնարուած է և քիչ ատենէն հրապարակաց վրայ ամէն ոք պիտի կրնայ ատոր միջոցաւ տեսնել այն ինչ թատրոնն, այնինչ ատենաբանին խօսիլը, այն ինչ մարդուն պարը ևն, ևն։

Համառօտ գաղափար մը տալու համար այս նոր հրաշալիքին վրայ աւելորդ չենք սեպեր մի քանի տող ևս գրել այդ մասին, որ տարակոյս չունենք թէ ախորժանօք պիտի կարդացուի։

Ֆինթօկրաֆը որ տակաւին հրապարակ չէ եկած, ֆօնօկրաֆի չափ գործիք մ'է ինքնին, մնտուկի մը մէջ ծածկուած։ Սա մնտուկին վրայ երկու ծակեր կան իրարմէ մէկ ու կէս մատնաչափ հեռի։ Մնտուկին քով կայ նաև ֆօնօկրաֆի մը որ ձայնն արձանագրելու պաշտօն ունի հոն։ Երբ այս միացեալ գործին արձանագրելու դիրքի մէջ դրուի իր քով լսուած ո և է ձայն կամ եղանակ և ո՛ և է մարդու շարժում կամ տեսարանի պատկեր հաւատարմութեամբ կը արձանագրուի անմիջապէս։ Օրինակի համար. եթէ զայն դրած լինինք թատրոնի մը բեմին առջև, արձանագրել կոխի երգուած երգերն, նուագուած եղանակներն, թատերաբեմի իր ամէն տեսարաններով, դերասաններու շարժումներն իրենց խօսած ժամանակ, առնոնց դալ երթալն ամենայն ճշգրտութեամբ և առանց մի ամենափոքրը շարժում զանց կրնալ ընելու։ Այս ամենն լմնալէ վերջ երբ գործիքն «արտադրելու» դիրքին մէջ դնենք, և երկու ծակերէն նայիլ սկսինք, միևնոյն թատրոնին մէջ պիտի դանենք զմեզ։ Նուագարանք նախ նուագել պիտի սկսին. վարագոյրն պիտի ելնէ, դերասաններն պիտի դան ու սկսին խօսիլ, երգել, պարել ճիշդ այնպէս որպէս ըրած էին բուն խպղի ժամանակ։ Այս տեսարաններն և դերասանաց շարժումներն արձանագրողը Ֆինթօկրաֆն է, իսկ ձայնն պահողն հաւատարիմ ֆօնօկրաֆն է, որք միասին գործելով ամէն ինչ կատարեալ կընեն։

Երբ ընդհանրանայ այս գործիքը և ֆօնօկրաֆի պէս ամէն մեծ խնդութիւններու մէջ դրուի, մէկը հինգ սէնթ միայն վճարելով ոչ միայն այսինչ դերասանի երգելն կամ այնինչ նուագածուի մի եղանակն պիտի լսէ խողովակի մը մէջէն, այլ պիտի տեսնէ նոյն դերասանն կանգնած բեմին վրայ որ խնարհութիւն մը ընելէ վերջ երգել կսկսի։ Երբեմն ծափահարութիւններ կը լլան, երբեմն ծիծաղներ կը բարձրանան, երբեմն երգիչը կը ժպտի, երբեմն կը տխրի, կը բարկանայ ևն, ևն։

Եթէ դարեր առաջ մէկը այսպիսի գործիքի մը հնարուելուն կարելիութեան վրայ խօսէր, անոր վարձքն կախաղանն պիտի ըլլար, բայց այսօր իրականութիւն մը է այդ, և տարակոյս չկայ թէ անկարելի թուած շատ բաներ պիտի գայ օր մը որ կարելի պիտի դառնան գիտութեան շնորհիւ։

Օդի մէջէն ճամբորդել, մէկ ակնթարթի մէջ հազարաւոր մղոն ճամբայ առնել, Հրատի և այլ ասաեղաց բնակիչներուն այցելութեան երթալ ևն, անկարելիութիւններ կը թուին մեզ, բայց ով գիտէ, թերևս մի քանի դար վերջ այս ամէնն լմնի և այն ատենի մեր յաջորդներն ծիծաղին ներկայ սերընդի ապիրատութեան վրայ։ Եւ ահա այս է պատճառն որ մարդս իրաւունք չունի իր չի գիացած կամ իր խելքէն վեր եղած բան մը անգոսնել, զի ժամանակը անկարելին կարելի կընէ մերթ։

—o—

Այս մասին այսչափս բաւական սեպելով՝ մեր յաջորդ թուին կը թողունք գրել մի այլ նոր գիւտի վրայ որ թէև Ֆինթօկրաֆի պէս օրհնեալ գործիք մը չէ, բայց նշուազնանաւոր գիւտ մը չի կրնար նկատուիլ գիւտերու աշխարհին մէջ։

ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԿԱՐԾԻՔԸ.

ԼՕԶ ԱՆՃԵԼԱ, ՔԱՂ.

Խմբագիր.

ԱԶԱՏՈՒԹԻՒՆը չնորհակալութեամբ ընդունեցի։ Եթէ ըսեմ թէ Ամերիկայի մէջ հրատարակուած լինելու արժանի թերթ մը է այդ, գուցէ ճշմարտութեան մէկ մասն միայն գրած կը լինիմ։ Արդարև ցայսօր Ամերիկայի մէջ լոյս տեսած բոլոր հայ լրագիրներու թագն ու պսակն է այս թերթ որուն համար իւր բոլոր ոյժն պատրաստ է տալ։ Ձերդ

Ա. ԱՄ.

ՆՕԹՀԱՄԹԸՆ.

Ընդունելի ձեր ԱԶԱՏՈՒԹԻՒՆ լրագրի հրատարակութեան 42րդ թիւը մեծաւ շնորհակալութեամբ։ Շատ ուրախ եմ որ ստած էք շարունակել մեր սիրելի լրագրի հրատարակութիւնն, որն կը յուսամ անընդհատ պիտի յղէք ձեր վաղեմի բարեկամին։

Ե. Ս.

ՓՐՈՎԻՏԷՆՍ.

Ըստացայ անցեալ օր երկու ծրար 47 թերթ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ պարունակող։ Եւ այժմ պատիւ ունիմ 47 անձանց շնորհակալութիւնն ու բարեմաղթութիւններն ղրկել ձեզ։

Յաջորդ ամիս մտադիր եմ ձեր կողմն գալ, եւ ուրախ պիտի լինիմ մօտէն տեսնել ձեր ազատ լրագրի ազատութեամբ գործելն։

Եթէ ո՛ և է ծառայութիւն մը կրնամ ընել ձեր թերթին համար, հաճեցէք իմացնել ընդ փոյթ։

Տ. Խ.

ՆԻՒ ԵՈՐՔ 15, ՅՈՒՆԻՍ 1891.

ՍԲՍՐՊՏԻ դադարը ինձ մեծ ցաւ մը պատճառած էր, զի տեղական թերթի մը խիստ պէտքը կը զգայի, տեղական լուրեր ստանալու համար, և այդ պէտքը 1891 Յունվարէն ի վեր ԱՐԱՌԱՏ միայն էր որ կը լեցնէր, լոկ տեղական լուրեր հաղորդելով, և տեղական օգուտներ մատակարարելով հեռի կեղծ ու պատիր Սզգի և Հայրենիքի շառլաթանութիւններէ, և մինչ այս մտախոհութեան մէջ ընկղմեալ էի, մի բարեկամ ինձ տուաւ մի թերթ։ Կրնաք դուշակել թէ զարմանքս ու ուրախութիւնս որքան մեծ եղաւ, երբ տեսայ խորագիրը՝ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ։ Տեսնելու մը կարդալ։ Զարմանքս կրկնապատկեցաւ։ Միևնոյն թերթն էր որ Երևան կուգար ու միևնոյն խմբագրի հեղինակութեամբ..... ..... տակաւին չեն կրնար զՁեզ կասեցընել Եղբային փչոտ և վհատալից ճամբէն, այսպէս կրկին յաստպարէզ կուգաք սուր և գրիչ միացուցած։ սուրով զաղթական Հայոց կեղծ ազգասէր յաստչտակիչներուն դէմ մաքառելու, և գրիչով այնպիսեաց խայտառակ արարքը աշխարհի իմաց տալու։ Գովելի և սքանչելի է Ձեր յանդգնութիւն, օ՜ն ուրեմն, այս անգամ կուզեմ հաւատալ որ պիտի ապրի Ձեր թերթ, որոյ յարատևութիւն մաղթելով կը մնամ ձերդ միշտ...

Ծանօթ

ՓԻԹՍԳԲՐԳ, ՓԷ. 4 Յուն.

(Անգղիարէնէ Թարգմանուած)

Սիրելի Խմբագիր

ԱԶԱՏՈՒԹԻՒՆի մէկ օրինակն ստացայ այսօր ընդունեցի սրտագին շնորհակալութեամբ, քաջ գիտէք թէ ի սրտէ կը սիրեմ Ձեր լրագիրն։ և երբ նա իւր հրատարակութիւնն դադրեցուց վերջերս (թէև անորոշ ժամանակի մը համար ուրիշներու հետ և ես կորսնցուցի մի ընկեր և սիրելի լրագիր, բայց այսօր ուրախ եմ զայն տեսնել աւելի փառաւոր և ընդարձակ։ Վստահ եղիք, Տէր, թէ ձեր թերթն ունի ինձ նման բազմաթիւ բարեկամներ ու համակիրներ որք պատրաստ են գոհ սրտով աշխատիլ անոր յաջողութեան համար։ Ձեր քաջարտութիւն զարմանալի եղած է անցեալն մէջ։ Ձեր լրագրի նպատակն եղած է սուրը և անշահախնդիր։ Եթէ կռուիք միևնոյն քաջութեամբ և անվեհերութեամբ ոչ միայն ԱԶԱՏՈՒԹԻՒՆն պիտի պսակուի յաջողութեան պսակով, այլ իր աստիճանին մէջ՝ պատճառ մը պիտի կրնայ բլլալ երկար տանէ ի վեր անհամբերութեամբ սպասուած ԱԶԱՏՈՒԹԻՒՆն բերելու մեր խեղճ երկրին՝ ՍԻՐԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ։

Պ. Հ. Թ.

Ծան.--Պ. Թ. թրքախօս հայ մը է որ թէև չի կրնար հայերէն գրել, այլ կը կարդայ կը խորհի և կրդայ իբրև ճշմարիտ հայ։

ՀԱՅԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆ ԵՒ ԿՈՎ ՄԱՐԹԵԼՈՒ ՄԵՐԵՆԱՆ

—o—

Անցեալներն երկու տարբեր ձեռագիրներ յանձնուած էր մեր գրաշարներու մէկին շարուելու համար։ Այս ձեռագիրներու մին Հայքի խմբագրին տրուած այցելութեան մը վերաբերեալ մի նամակ էր, իսկ միւսն կով մորթելու համար չինուած նորահնար մեքենայի մը համառօտ նկարագրութիւն։

Պ. Դրաշարն սխալմամբ այս երկու տարբեր յօդուածներն իրարու խառնած էր անանկ զարմանալի կերպով մը որ շարուածը կրնար բոլորովին տարբեր մի յօդուած սեպուիլ։ Այս մասին դաղափար մը տալու համար մեր ընթերցողաց, աւելորդ չենք սեպեր հոս դնել կտոր մը այդ զարմանալի խառնուրդէն որ՝ իրը հետաքրքրական ինչ՝ տարակոյս չունինք որ ախորժանօք պիտի կարդացուի։

«Անցեալ օր Ձեր բարեկամն ԱԶԱՏՈՒԹԻՒՆի վերջի թերթն իւր հետն առած՝ գնաց տեսնել Հայքի խմբագիրն որ մոս մինակ նստած իր սենեկին մէջ Հայր Ալիշանի Սիսուանին դէմ անպատճառ քննադատութիւն մը կը գրէր։ Քաղաքավարական քանի մը խօսքեր փոխանակելէ վերջ, խօսքը բացուեցաւ ձեր լրագրի վրայ։ Խմբագիր պարոնն սաստիկ յուզուած հայհոյել սկսեց, և եր տեսաւ իմ քով ձեր թերթն աւելի յուզուեցաւ, «Տըուէք ինձ այդ թերթն որ քանի մը բաներ ցոյց տամ ձեզ» ըսաւ ինձ, և եսլրագիրս իւր ձեռքը տուի անմիջապէս։ Խեղճ դենդանին աչքերն կրակ կտրեցան, շորս ոտքերն օդին մէջ երերալ սկսեցին։ Վերջի բռնկն հասած էր այլ ևս, թէև նա կը պնդէր թէ Հայքը պիտի ապրէր յաւիտեան։ Եւ ահա մեքենագործը յուցամատով կռնակի մը վրայ զոնեց, ու կովը իւր վերջի բառաչին հետ վերջի շունչը փչեց մեքենայի երկաթեայ թեւերուն մէջտեղ։

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆի ՄԱՍԻՆ.

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ լրագիրն իրը մէկ տարի լուռ մնալէ վերջ այժմ կրկին անգամ հրատարակուիլ սկսած է առանձին ընկերութեան մը օժանդակութեամբ։

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ իրը ամսաթերթ պիտի սկսի ըլլա գալ առ այժմ, ու իւր հրատարակութիւնն ապահովուած է այժմէն երկու տարիի համար։

ԱԶԱՏՈՒԹԻՒՆի բաժեն գինն թէև կանխիկ է, բայց ոչ այս տարիի համար։ Պատուաւոր կերպիս մեզ բաժանորդագրողանձինք կրնան իրենց պարտքն վճարել երեք ամիսէ վերջ։

ԱԶԱՏՈՒԹԻՒՆն պիտի լինի անվախ, անկախ և ճշմարտախօս լրագիր մը առանց ծառայելու այս ինչ կամ այնինչ կուսակցութեան։ Սնճեական վէճեր, կրօնական խնդիրներ և այլ անկարևոր գրութիւններ չի պիտի հիւրընկալուին իւր սիւնակաց մէջ։

ազիրս չէզոք դիրք մը պիտի չ'բռնէ ընդհանրութեան վերաբերեալ խնդիրներու առջև։ Նա սնիրաւութիւններն պիտի հարուածէ միշտ. սխալը՝ պիտի դատապարտէ քաջութեամբ, և երբոր հասարակութեան շահը պահանջէ, պիտի կռուի ո՛ և է անհատի դէմ, առանց կողմնակալութեան և նկատումի։

Ա Զ Դ

Տօք. Անդրանիկ Այվազեան պատիւ ունի ծանուցանել հայ հասարակութեան թէ իւր բնակութիւնն փոխադրած է ի թիւ 164 Իսթ 80րդ փողոց, Նիւ Եորք. ուր հիւանդ կընդունի առաւօտեան ժամը 8էն մինչ 9ը և երեկոյեան ժամը 6 էն մինչ 8ը։

Open day and night.

Eguinin Binding & Mailing Co.

12 Frankfort Street,

NEW YORK.

Open day and night.

F. SCHAUB,

431 Palisade Avenue,

JERSEY CITY H'G,T'S, N. J.

ԾԱՆՈՒՑՈՒՄ.

Այն ամէն Հայերն որք կը փափաքին դրամ ղրկել իրենց բարեկամաց ի Թուրքիա կամ ի Յունաստան, Զէք Պանք դրամական փոխանակագիրներն պիտի դանեն ամենասպահով, ամենաժամն և լաւագոյն։

MATHEWS & CO.,

BANKERS.

No. 2 Wall St. New York.

Andrew Scott, John May,

Scott & May,

Illustrated and Plain Newspaper,

BOOK & JOB

PRINTERS,

PRESS ROOMS:

15 Spruce St., NEW YORK.

Pressess Runing Day & Night.

CONEY ISLAND,

BRIGHTON BEACH,

WEST BRIGHTON BEACH,

From Foot of Wholtehall st.,

Առաւօտեան ժամը 7. 10էն մինչև 10. 10 ամէն կէս ժամը անգամ մը նաև կը մեկնի յիրեալ նաւամատոյց էն. յետոյ ամէն մէկ ժամը անգամ մը նաև կը մեկնի առաւօտեան ժամը 10. 40էն մինչև 9. 10 երեկոյ, վերջի ՍԱՐԱՏԻՆ վերջի նաւը կը մեկնի 10.28էն երեկոյեան։ Երթեւեկութեան գին 40 սենթ.

ՀՈՄՔԷՐ ԼԷՔ

ՊԱՆԷՐՈՎ ԳԻՐՔԵՆԻ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԻԼՏԻՆԿԻ ՄԷՋ,

ՆԻՒ ԵՈՐՔ

ԷՄԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱՁԱՍՏՈՒՆ-

"ՈՒՐԱԽ" ԼՈՒՍԱՓԻ ՄԵԾ ՅԵՆԷՔԻՆ ԿԻՑԸ, ՆԻՒ ԵՈՐՔ

12

ԿԿԺ 'ՑՍՆՍՓ

ԺՅՕՓԺՂՈՅՓ

Ո ԵՒ Է ԳԻՆԱԿՈՒԹԵԱՄԲ Ա-ՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔ ՈՒ ՏԵՍԱԿ ԿԸ ԿԱՁՄՈՒԻ։

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ո ԵՒ Է ԳՈՒՄԱՐՈՎ ՊԱՏՐԱՍՏ ԿԸ ԼԻՆԻ ՄԱՆՆԵՐՈՎ։

ԷՄԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱՁԱՍՏՈՒՆ-

Արշալոյսի

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՍԱՅԻՍԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ ՄԻԱՅՆ

Տարեկան բաժանորդագինն մէկ տոլար մ'է միայն,

ԿԱՄ ԵՐԵՔ ՕՐԸ ՄԷԿ ՍԷՆԹ.

Ամէն մէկ թուի մէջ խմբագրական յօդուածներ, թղթակցութիւններ, զուարճալիք և այլ կարևոր յօդուածներ։

ARMENIA

an

ANGLO FRENCH JOURNAL

Political & Literary

Published on 1st & 16th of every month.

Editor: Minasse Tcheraz,

Ex-Armenian Delegate at the Berlin Congress.

Address: 28 Bedfore Place,

London, W. C. Eng.

ԱՐԱՐԱՏ

ԵՐԿ-ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՓԱՌՆԱԿ Մ. ԱՅՎԱՍ-- Խմբագիր.

Տարեկան բաժանորդագինն է երկու Տոլար։ Հասցէն՝

72 University Place,

New York.

I. A. ISAACS,

Տպագրչաց եւ Կազմարարաց վերաբերեալ մեքենաներ.

36 & 39 Beekman St.,

Նիւ Եորք.

Ծան.--Երբ կը գնէք մի մոռանաք ըսել թէ ծանուցումն ԱԶԱՏՈՒԹԻՒՆի մէջ տեսաք։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ.

ԿՍԿԾԱՆՔ

Գրեց

Հ. ԷԿԻՆԵԱՆ.

Հեղինակին ընտիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ գրուած, որ կը վաճառուի խմբագրութեանս քով հատը 15 Սենթի սիայն։

ԼՈՅՍ ԵՒ ԽԱՒԱՐ

Գրեց

ՊԱՏ. Կ. ԲԱՐԱԿԵԱՆ

Կը վաճառուի Նիւ Եորքի մէջ խմբագրութեանս, իսկ յԱմերիկա Հեղինակին քով, հատը քսան եւ հինգ Սէնթի։

ԱՐՄԷՆԻԱ.

ԱԶԱՏԱԿԱՆ ԿԻՍԱՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԵՒՆ. ԵՒՆ.

Վեցերորդ տարի։

Տարեկան բաժանորդագինն է չորս տոլար. Հասցէն,

Redaction du journal „Armenia", Marseille, France

ԲԱԶՄԱՎԷՊ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

Ամսաթերթ

ԽԹ. Տարի, 1891։

Տարեկան բաժանորդագինն է տասը Ֆր. (4 Բուբլի). Հասցէն՝

Redaction de la revue "Basmavep", Venise, Italie, St.

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ։

Ե. Տարի 1891։

Տարեկան բաժանորդագինն է 10 Ֆր. (4 Բուբլի.). Հասցէն՝

Redaction de la Revue "Hantess", Vienne, (Autriche). VII Mechitaristengasse, 4.

ԱՐՄԷՆԻԱ.

Հունգարերէն Ամսաթերթ։

ՊԱՏՄԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ։

Բ. Տարի. 1891

Տարեկան բաժանորդագինն է 10 Ֆր. Հասցէն՝

Szongott Kristoff urnak, Szamosujvar (Hongrie).